V W. Li.
1503

1999

Ա. Ե.
1503

# Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ

## ԸՆՏԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ Գ. ԹԱԼԱԹԵԱՆԻ

## ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ՀԵՂԻՆԱԿԻ 2 ՊԱՏԿԵՐՈՎ, ԻՆՔՆԱԳՐՈՎ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՎ
ԵՒ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԳՐՔՈՎ.

### *ՀԱՏՈՐ I*

## ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ
ՎԱՌՎԱՌԷ Յ. ՔԱՆԱՆԵԱՆ

ՅՕԳՈՒՏ ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԸՆՏԱՆԵԱՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Յ. ԼԻՓԵՐՄԱՆԻ. «ԱՐԱՔՍԻ» ՏԱՌԵՐՈՎ.
1893

Дозволено цензурою. СПБ., 11 Мая 1893 года.

29-1511




Паровая Скоропечатня **Я. И. Либермана.** Вознесенскій пр., 38—4.

1503-81

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՑ

Իմ ձեռնարկած հրատարակութիւնը մի տուրք է ամենախորին յարգանաց դէպի մեր մեծ բանաստեղծի յիշատակը: Անձնանուէր ծառայութիւն հասարակութեան և բարձր իդէալներ—ահա՛ ինչին էր նա ամբողջապէս նուիրել իւր հրաշալի բանաստեղծական ձիրքը:

Բայց ապրելով ուրիշների համար, մշակելով, զարդարելով և ճոխացնելով ազգականական անդաստանը՝ նա մոռացաւ իւր անձը, մոռացաւ իրեն մերձաւոր ու թանկագին էակների մասին: Նիւթականի հոգսերը նորան չէին խռովում: դոքա պակաս էին նորան վշտովում, քան ազգային բարիքը և իւր հայրենակիցների մտաւոր վերածնութիւնը:

Գուշակ ճշմարտութեան և ստեղծիչ հայ բանաստեղծութեան—նա հաւատ ունէր դէպի մարդիկ, հաւատում էր որ արդարութիւնը և բարին պէտք է յաղթանակէ նոցա մէջ: Եւ նա չըսխալուեց. մահուան անկողնում պառկած և արիաբար ոգորելով իրեն ձրնշղոց հիւանդութեան դէմ՝ նա դեռ կենդանութեան ժամանակ սիրուեց, տեսնելով ի՛նչպէս ճշմարիտ բարի մարդկանց կողմից կարկառւում էին օգնութեան ձեռքեր դէպի իւր անօգնական ընտանիքը: Աւելի ուրախալի էր նորա

համար այն միտքը, թէ այդ համակրութիւնը արտայայտվում է յատկապէս նոցանից, ով որ կարող էր գիտէ և կամենում է գնահատել իւր անմահ երկերը, ով գիտէր գին գնել իւր հազուագիւտ տաղանդին, և ով յարգում էր իւր անշահասէր անձնանուիրութիւնը ազգային գաղափարին և հասարակական բարիքին:

Ներկայ հրատարակութեամբս ես կը ցանկայի կցել և իմ լուսմաս այն բարի նուիրաբերութիւններին, որոնք հաւաքվում էին յօգուտ անմահ բանաստեղծի ընտանեաց:

Այսու պարտականութիւն եմ համարում իմ խորին շնորհակալութիւնս յայտնել գիտնական հայագէտ մեծարգոյ Գ. Ա. Խալաթեանին, որ յանձն առաւ խմբագրելու ներկայ հրատարակութիւնը՝ ջերմ համակրութիւն և լուսամիտ աջակցութիւն ցոյց տալով իմ ձեռնարկութեանս:

Վաղարշապատ, Քանանեան.

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Որպիսի՛ Պատկանեանը՝ ինչպէս յայտնի է, թողել է բազմաթիւ և բազմատեսակ տպած և անտիպ գրուածներ: Ներկայ հրատարակութեան նպատակը չէր բոլոր գրուածների լիակատար ժողովածուն լոյս ընծայել, այլ գոյանից միայն պա՛տ գրականական ինքնուրոյն երկերը և այն՝ մանաւանդ ընտրողութեամբ:

Յարմարութեան համար բաժանելով ամբողջ հրատարակութիւնը երկու հատոր՝ առաջնում մենք տեղաւորեցինք քառապեղծո՛ւն՛ները և երկրորդում՝ պիւհկ գրո՛ւածները. իւրաքանչիւր հատոր լեզուի վերաբերմամբ բաղկացած է երկու մասից. նախ՝ գրականական և ապա՝ գա՛ւա՛ռական (Ն. Նախիջևանի):

1. Նի՛ւնելի ընդդոդը՛ւնի՛ն:—Գրականական լեզուով բանաստեղծութիւնները՝ ինչ որ մեր ձեռքը կար՝ տպած *)

*) Տպե՛ւրնե՛ւէս այս բաժնի համար օգտուեցինք.

1) Հինգ տետր «Գամառ-Քաթիպայի» արձակ և չափաբերական գրուածների,—Ս. Պ. Բուրգ, 1855—1857:

2) «Ազգային Երգարան», հրատ. Գամառ-Քաթիպա, Ս. Պ. Բուրգ, 1856—57.

3) «Կռունկ Հայոց Աշխարհի», 1861 և 1862 թթ.:

4) «Գամառ-Քաթիպայի Բանաստեղծութիւնք» (հրատ. Ի. Տ. Միքայէլեանց և Ընկ. Գրավաճառ.): Մոսկուա, 1864.

5) «Փորձ», ամսագիր 1877—1880 թթ.

6) «Գամառ-Քաթիպայի Բանաստեղծութիւնք» (հրատ. Թիֆլիսի Հրատ. Ընկ.), Մոսկուա, 1881.

—Նոյնպէս՝ «Մշակ», «Արձագանք», «Նոր-Դար», «Արաքս» և մի քանի այլ թերթերից: (Տե՛ս ատրև Ռ. Գ-ի Կենսագրական նկարագիրը:)

համար այն միտքը, թէ այդ համակրութիւնը արտայայտվում է յատկապէս նոցանից, ով որ կարող էր գիտէ և կամենում է գնահատել իւր անմահ երկերը, ով գիտէր գին գնել իւր հաղուագիւտ տաղանդին, և ով յարգում էր իւր անշահասէր անձնանուիրութիւնը ազգային գաղափարին և հասարակական բարիքին:

Ներկայ հրատարակութեամբս ես կը յանկայի կցել և իմ լումաս այն բարի նուիրաբերութիւններին, որոնք հաւաքվում էին յօգուտ անմահ բանաստեղծի ընտանեաց:

Այսու պարտականութիւն եմ համարում իմ խորին շնորհակալութիւնս յայտնել գիտնական հայագէտ մեծարգոյ Գ. Ս.. Խալաթեանին, որ յանձն առաւ խմբագրելու ներկայ հրատարակութիւնը՝ ջերմ համակրութիւն և լուսամիտ աջակցութիւն ցոյց տալով իմ ձեռնարկութեանս:

Վաղարշապատ Քանանեան.

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դափայել Պատկանեանը՝ ինչպէս յայտնի է, թողել է բազմաթիւ և բազմատեսակ տպած և անտիպ գրուածներ: Ներկայ հրատարակութեան նպատակը չէր բոլոր գրուածների լիակատար ժողովածուն լոյս ընծայել, այլ գոյանից միայն գլուխ գրականական ինքնուրոյն երկերը և այն՝ մասնաւոր ընտրողութեամբ:

Յարմարութեան համար բաժանելով ամբողջ հրատարակութիւնը երկու հատոր՝ առաջնում մենք տեղաւորեցինք քառատողեղծո-ւթիւնները և երկրորդում՝ պոէտական գրուածները. իւրաքանչիւր հատոր լեզուի վերաբերմամբ բաղկացած է երկու մասից. նախ՝ գրականական և ապա՝ գաւառական (Ն. Նախիջևանի):

1. Նի-ւթերի ընտրողո-ւթիւն:—Գրականական լեզուով բանաստեղծութիւնները՝ ինչ որ մեր ձեռքը կար՝ տպած *)

---

*) Տպագրուեցին այս բաժնի համար օգտուելինք.

1) Հինգ տետր «Գամառ-Քաթիպայի» արձակ և չափաբերական գրուածների,—Ս. Պ. Բուրգ, 1855—1857:

2) «Ազգային Երգարան», հրատ. Գամառ-Քաթիպա, Ս. Պ. Բուրգ, 1856—57.

3) «Կռունկ Հայոց Աշխարհի», 1861 և 1862 թթ.:

4) «Գամառ-Քաթիպայի Բանաստեղծութիւնք» (հրատ. Ի. Տ. Մկրտչեանց և Ընկ. Գրավաճառ): Մոսկուա, 1864.

5) «Փորձ», ամսագիր 1877—1880 թթ.

6) «Գամառ-Քաթիպայի Բանաստեղծութիւնք» (հրատ. Թիֆլիսի Հրատ. Ընկ.), Մոսկուա, 1881.

—Նոյնպէս՝ «Մշակ», «Արձագանք», «Նոր-Դար», «Արաքս» և մի քանի այլ թերթերից: (Տե՛ս տետրև Ի. Պ-ի Կենսագրական նկարագիրը)

և անտիպ — համարեա ամբողջապէս տեղաւորեցինք ներկայ հրատարակութեան մէջ, դուրս թողնելով միայն մի քանիսը, որոնք՝ մեր կարծիքով, պակաս ա-ջողուած էին. այն է՝ երկուսը 1850 թ. գրուածներից և և Լերմոնտովի «Երեք Արմաւենիք», Պուշկինի «Ոսկի Ձկնիկ» և ինքնուրոյն՝ «Մարիամ» վէպը. մնա-ւանդ որ վերջին երկուսը Ռանիական ոտանաւորներին են մօտենում, որոնք մեր ծրագրից դուրս էին: Սոցանից զատ՝ մի-երկու անտիպ բանաստեղծութիւններ անկա-րող եղանք ապագրել մեզանից անկախ պատճառներով:

Ահա առաջին հատորի Ա. Մասի մէջ արած մեր ընտրողութիւնը:

Համարեա թէ նոյնպէս վարուեցինք գեղական բա-նաստեղծութեան (Ա. հատորի Բ. Մասի) վերաբերմամբ, — արտատպելով ամբողջապէս «Ն. Նախիջևանի Քնա-րը» (1879) և և «Մեղու Հայաստանի» (1879), «Արձա-գանք (1885, 1887), «Հանդէս գրակ». և պատ. (1888) թերթերում լոյս տեսածները և սոցա վերայ աւելացնե-լով մի քանիսը անտիպներից:

Գիւղականական արձակ գրուածներից (Բ. հատոր, Ա. Մասն) մենք տպագրեցինք համարեա բոլոր ծանօթ վէ-պերը *). իսկ պատկերներից միայն երեքը («Հոգեվար Հայ-րը» առաջին անգամ),—թողնելով մնացեալ բազմաթիւ թէև տաղանդաւոր մանր-գրուածները՝ գլխաւորապէս ո-րովհետև դոցանից շատերը (Ճանապարհորդակ. տպաւոր. և այլն) ընդհակառակն են մօտենում: Մի-երկու անտիպ պատկեր հնար չեղաւ հրատարակել: Խպատ բայ թողնենք նապէլեական գրուածները, որոնք բանաստեղծի թոյլ կող-մըն էին:

*) Տե՛ս հատոր՝ Ը. Գ-ի կենսագրական նկարագիրը:



Փոքր ինչ տարբեր էր մեր տեսակէտը Ն. Նախիջևա-նի գեղարուեստական գործոց վէպերի և պատկերների ընտ-րողութեան վերաբերմամբ (Բ. հատոր. Բ. Մասն): Նիւթերի առատութեան պատճառով մենք դոհ եղանք վաղագոյն ամենալաւագոյն գրուածներով և բաց թողնենք՝ մի քանիսը՝ հակառակ մեր կամքին, և բաւական թուով աջող պատ-կերներ՝ գիւտամբ, որպէս զի գեղարուեստական պրօզայի բա-ժինը չը գերակշռէ գիւղականականին՝ ներկայ հրատարա-կութիւնը նշանակուած լինելով ազգի մեծամասնու-թեան և ոչ թէ մի գաւառի ժողովրդի համար:

2. Նէ-ընէրէ պատասխանե-նե: Նիւթերը մենք յար-մար տեսանք դասաւորել քաղաքագրական կարգով — նախ՝ որովհետև այդ միակ ապահով միջոցն է հետևելու մեր հեղինակի տաղանդի աստիճանաբար զարգացմանը և ապա՝ դժուար էր աւելի յարմար եղանակով դա-սաւորել՝ Ռ. Պատկանեանի երկասիրութիւնները քըն-նական կերպով դեռ ուսումնասիրուած չըլինելու պատ-ճառով:

Այս առթիւ պէտք է ասենք, որ գեղանական քաղա-նակ մենք հաշուել ենք ընդհանրապէս գրուածքի պատ-գեղանական նպատակը և երբեմն՝ բուն ձեռագրի գրութեան տարին՝ եթէ այդ հնար էր լինում ճշտիւ իմանալ: Բաւականաչափ պարբերաբար մասնաւորապէս «Գամառ-Քաթիպայի» բանաստեղծութիւնների՝ ինքներս կարողա-ցանք որոշել՝ թերթելով այն գրքոյկները, ժողովածու-ները կամ պարբերական թերթերը, ուր նոքա առաջին անգամ էին լոյս տեսել: Վաղագոյն բանաստեղծութիւն-ներից պատահեցին գրութեան տարիքը, որոնք անո-րոշ էին, բանաստեղծը ինքը հաղորդեց մեզ նամակով: Տաճկահայի չափ տարեթուերն էլ՝ իրեն բանաստեղծին

անդամ անյայտ *),—թէ և կողմնակի հանդամանքներով մենք հաւանականօրէն որոշեցինք, բայց հաւաստացած չենք, որ լեռվին հաստատ լինէին դրքա. այն է՝ «Եղիշէ» (1872), «Սիրոյ ղոհեր» (1874), «Երգ» (1876), «Մեսրովպ, Վարդան, Ղեւոնդ» (1885), «Սէր և Գինի» (1887), «Անկատար ցանկութիւնները» (1889) **):

3. Խմբագրութիւնը անուշադիր չթողեց նաև այն խնդիրը, թէ Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններից որոնք նպրգճանական են կամ փոխառած, և ամեն անդամ այդ որոշակի նշանակեց ոտանաւորների խորագրերի տակ՝ հիմնուելով այն տեղեկութիւնների վերայ, որ ընծայում են մեզ առաջին տպագրութիւնները և որ ինքը բանաստեղծը հրատարակել էր լրագիրներում կամ մասնաւոր նամակով հաղորդել մեզ:

4. Ո—ղջագո—ննե: Ուղղագրութիւնը մենք թողինք ամեն տեղ անփոփոխ՝ ձշտութեամբ արտատպելով, ինչ որ արդէն լոյս ընծայուած էր, և հաւատարմութեամբ հետևելով հեղինակի ձեռագիրներին, որոնց առաջին անդամն էինք տպագրում: Միայն մի լրացո—ցնել յատկապէս «Գամառ-Քաթիպայի» բանաստեղծութիւնների մէջ—ոտանաւորների յանկաւոր և ներդաշնակ ընթերցանութեան համար և այն՝ 4-որդ թերթից միայն սկսած:

5. Բառգիրք: Ներկայ հրատարակութեան գլխաւոր նպատակն էր գրուածները ընդհանրութեան մատչելի անել, ուստի և ամենայն դիւրութիւն ձգտեցինք տալ ընթերցողին՝ ոչ միայն ոտանաւորների իմաստը հասկանալու, այլև նրանց ոճի և լեզուի առանձնայատկութիւնները ուսումնասիրելու համար: Այդ նպատակով մենք ոչ միայն ամեն տեղ ծանօթագրեցինք բառերի նշանակութիւնները, այլև ցոյց տուինք, թէ ինչ ձևերով են գործածուած նոյն բառերը տարբեր հեղինակների մօտ, որպէսզի ընթերցողը կարողանայ ինքն իրան համար եզրակացնել, թէ ինչ ձևերով է գործածուած տուեալ բառը ամենից աւելի ճիշտ և գեղեցիկ: Այդ նպատակով մենք ամեն տեղ ցոյց տուինք նաև այն տարբերութիւնները, որ կան Գամառ-Քաթիպայի տպագրութիւնների և ձեռագրերի միջև, որպէսզի ընթերցողը կարողանայ ինքն իրան համար եզրակացնել, թէ ինչ ձևերով է գործածուած տուեալ բառը ամենից աւելի ճիշտ և գեղեցիկ: Այդ նպատակով մենք ամեն տեղ ցոյց տուինք նաև այն տարբերութիւնները, որ կան Գամառ-Քաթիպայի տպագրութիւնների և ձեռագրերի միջև, որպէսզի ընթերցողը կարողանայ ինքն իրան համար եզրակացնել, թէ ինչ ձևերով է գործածուած տուեալ բառը ամենից աւելի ճիշտ և գեղեցիկ:

*) Ռ. Պատկանեան չունէր տեղեկութիւն իւր գրուածների տակ նշանակել տարեթիւը, ամիսը, օրը որպէս և գրութեան տեղը:

**) Օգտուում ենք դէպքից ուղղելու մեր նշանակած տարեթուերից առաջիկայ երկուսը. «Օրօրոցի երգը» տեղափոխելով 1863 թից 1856 թ. և «Աստղիկները» 1887 թից 1884 թ.:



նելու դիտմամբ՝ Բ. Հատորի վերջում տեղաւորեցինք «Համառօտ Բառգիրք Ն. Նախիջևանցոց լեզուի»,—մի աշխատութիւն, որի նիւթերը մեծ մասամբ լինքը՝ հեղինակն էր պատրաստել՝ իւր արձակ գրուածների տակ նշանակած լինելով գաւառական խորթ բառերի նշանակութիւնները: Խմբագրութեանս ճնում էր միայն լրացնել («Ն. Նախիջ. Բնարի» համար) և այբբենական կարգով դասաւորել դոցա՝ օգտուելով նոյնպէս իւր՝ Ռ. Պատկանեանի՝ 1870 լոյս տեսած «Օտար ազգի բառերի ծագումնաբանութիւնից» և Ռ. Ախտամերկեանի (նոյն Ռ. Պ.) «Նոր Նախիջևանի ոճով պատմածներին» համար հանդուցեալ Ռ. Պատկանեանի կազմած համառօտ Բառարանից *):

6. Պատկերներ և նկարագիր: Առաջին հատորի սկզբում զետեղած պատկերը վաղուցուայ նկարած է՝ կարծեմ, բանաստեղծի եղբայր Յ. Պատկանեանի ձեռքով, և ներկայացնում է բանաստեղծին ուսանողութեան ժամանակ՝ Մոսկուայում: Երկրորդ հատորի պատկերը, որ արտատիպ է Բագու քաղաքում հանած լուսանկարից, ներկայացնում է նորան 60 տարեկան առնական հասակում՝ վերջին անդամ նորա Անդրկովկաս եղած միջոցին:—Նկարագրելիքից երկուսն ևս բանաստեղծի իսկական ձեռագրերն են. մէկը նորա «Կտակն» է, որ թողեց ապրին, և միւսը՝ օրինակ նորա «Նկարագրո—ննեան» մի անկատար բանաստեղծութենից առած:

---

Ներկայ հրատարակութեան համար օգտուեցինք այն ամեն նիւթերով, ինչ որ կարողացանք ձարել և կամ ուղարկել հաճեցին մի քանի բարեմիտ աղգայիններ: Հեղինա-

*) Матеріалы для изученія армянскихъ діалектовъ. Выпускъ I: Говоръ Нахичеванскій, издалъ *К. Паткановъ*. С.-Пб. 1875.

կի մի-երկու անտիպ գրուածքը՝ հակառակ մեր կամքին և բանաստեղծի ջերմ ցանկութեան, հնար չունեցանք տպագրել, անկարող լինելով ստանալ դոցա այն անձերից, որոնց մօտ նոքա պահվում էին:—Ներկայ հրատարակութեան դաղափարը՝ թէև շատ հաճելի էր Ռ. Պատկանեանին, բայց նա մեծ յաջողութիւն չէր սպասում նիւթական տեսակէտից: Ահա ի՛նչ էր գրում այս մասին հանդուցեալ բանաստեղծը Մեծ. հրատարակիչ Տ. Վառվառէ Քանանեանին իւր մահից մի քանի ամիս առաջ:

«Խօսք չեմ գտնում, որով կարող լինէի, թէկուզ հարիւրերորդ մասը երախտագիտութեանս զգացմունքը արտայայտելու Ձեզ թէ՛ առհասարակ անցեալի և թէ՛ մանաւանդ այժմուայ Ձեր կատարած գործի վերաբերմամբ: Բայց երկրորդ անգամ ահա ասում եմ Ձեզ, որ եթէ բարի ցանկութիւն ունիք իմ գրուածքը ընծայելով, ո՛ր և է նիւթական օգնութիւն հայթհայթել ինձ՝ սաստիկ սխալվում էք: 5 միլիոնեայ հայ ազգը կարդացել է, կարդում է, լսում է, երգում է իմ գրուածքը, շատ մասը նոցա մինչև անգամ անգիր գիտէ, բայց շատ երկբայելի է, որ նա 40—50 կոպէկ տայ և գնէ իմ շարադրութիւնն: Մի՞թէ Ձեզ մինչև այժմ յայտնի չէ, որ հայի մէջ հայի գիրքը, հայ լրագիր տարածվում է միայն միջնորդների և հզօր աղաների ձեռքով և այն՝ հաղար Ռոճանաննէրով: Այդց գրքի համար փող տուողը մեր մէջ համարվում է ընտիր, զուտ, անկեղծ, անձնուրաց ազգասէր: Իմ անցեալ կեանքում, գրուածքս լոյս ընծայելով, ես աւելի քան թէ 3000 ռ. գրպանէս մսխել եմ. իսկ եթէ հարցնէք՝ արդեօք զուտ 100 ռ. վարձատրութիւն ստացի՞լ եմ, քա՛ւ լիցի»:

«Ամաձայն Ձեր հրահանգին՝ ահա ուղարկում եմ ցուցակը իմ գրուածքին ևս և տեղերն, ուր նոքա տպված են կամ գտնվում են: Բայց ձեռք բերելու և Ձեզ հասցնելու,



հաւատացէ՛ք, ոչինչ մարդկային հնար չունիմ այս կիսակենդան դրութեան մէջ»:

«Ա՛րի և հարկ Ղուք պիտի դիմէք այժմուայ և անցեալ լրագրապետներին և յորդորէք նոցա, որ նոքա այս գործումն օգնեն Ձեզ: Ա՛յստեղ Պարոն Ղ. Ալիշանեանց կարող է մեծ և հուժկու դեր խաղալ, համոզուած եմ, որ հայ լուսամիտների մէջ նորա խօսքը անցուկ է և նորա վարկը մեծ է»:

1. «Ա՛ղբու Ա՛յաստանի» Պ. Ալիքսանեանի խմբագրութեան օրով:

2. «Կռունկ», «Թրօվաթօրէ» եղերերգութիւն և այլ թարգմանութիւններ:

3. «Փորձ», վէպեր, ճանապարհորդական տպաւորութիւններ, ոտանաւորներ:

4. «Ա՛շակ» մանր յօդուածներ:

5. «Ա՛րձագանք» շատ մանր վէպեր, եգիպտաբանական գրուածք, ոտանաւորներ:

6. «Նոր-Կարի» առաջին տարուայ առաջին №№-ում:

7. «Ա՛նդէս Պրակական և Պատմական»:

8. Ново-Нахичеванскій говоръ—Ա՛խտամերկեան, լոյս ընծայած Ղ. Պատկանեանի: Նայի դորանից Հանդուցեալի թղթերի մէջ պիտի գտնուին շատ իմ անտիպ ձեռագիրներն:

9. Ա՛բգար Յովհաննիսեանի մօտ կայ «Փամեշչիքի աղջիկ» «Дочь помѣщика» վէպ, ձեռագիր: Մեծ ցաւ կ'պատճառէ ինձ, եթէ կորել է: Ա՛յս՝ պատասխան էր Նովս Немировичъ-Данченко'ին նորա մի անճոռնի հայի վերա գրած повѣсть'ի դէմ. Око за око, зубъ за зубъ!

10. Պր. Ենգիբարեանի *) մօտ ևս կայ մի ժողովրդական խոշհբդաւոր վէպ, ձեռագիր:

11. «Երկու Ղրքոյկ» մանկական երգերի, տպած:

---

*) Պր. Փ. Ենգիբարեանի՝ Տ. Վ. Քանանեանին գրած մի նամակից (1892, 10 Ապրիլի) երևում է, որ այդ վէպը ինքը մի երկու տարի առաջ յանձնել է «Արձագանքի» խմբագրութեան: Ծան. Խմբ.

12. «Աւետաւորք» թարգմանութիւն գերմաներէնէն....

«Ընձագանչի» միջոցով ինձ հարցրել էին՝ թէ իմ ո՞ր գրուածքը օտար գրականութենէ փոխառութիւն է և ո՛րը ինքնուրոյն երկ: Ես գրաւոր կերպով պատասխանեցի և ցոյց տուի: Եթէ տպուի՝ իսկոյն ձեզ կուղարկեմ եթէ ոչ՝ նորից կ'նշանակեմ և գրաւոր կ'հաղորդեմ Ձեզ, որ աւելացնէք իւրաքանչիւր փոխադրած գրուածքի վերայ...»:

---

*Ի վերջոյ խմբագրութիւնս պարտականութիւն է համարում իւր ջերմ շնորհակալութիւնը յայտնել այն ամեն անձանց, որոնք իւ և իւէ ցոյց տուին իրենց աջակցութիւնը ներկայ հրատարակութեան գործում: մասնաւորապէս՝ Մեծարգոյ Տիկին Աննա Աղաթօնեան Պատկանեանին, Մեծ. պ.պ Փիլիպպոս Վարդանեանին և Գրիգոր Զալխուշեանին—մեր բանաստեղծի իրենց մօտ պահուած բազմաթիւ ձեռագիրները մեզ ուղարկելու համար, Մեծ. պ. Մելքոն Փանեանցին՝ իւր մատենադարանի հին ու նոր հայ պարբերական թերթերը մեզ հասցնելու համար և Լազարեան ձեմարանի նախկին աշակերտներ՝ Մեծ. պպ. Մինաս Բերբերեանին և Յակոբ Բուղդանեանին, որոնք՝ հմուտ լինելով Ն. Նալբանդեանի՝ իրենց մայրենի բարբառին, սիրով յանձն առան լրացնելու և կարդի բերելու մեր «Բառգիրքը»:*

Գ. Խալաթեան.

6 Մայիս 1893.
Մոսկուա.

# ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ռափայէլ Պատկանեան ծնաւ 8-ին նոյեմբերի 1830 թ. Նոր-Նախիջևանում: Մտանալով իւր հօր՝ Տէր-Գաբրիէլի՝ մօտ սկզբնական ծանօթութիւնը հայերէն լեզուի, որի ամենափայլուն ներկայացուցիչը վիճակուած էր նորան լինելու, նա շարունակում է իւր հիմնաւոր ուսումը 40-ական թուականների սկզբից Լազարեան ձեմարանում, ուր այն ժամանակ ի միջի այլոց դասախօսում էր երիտասարդ գիտնական Մկրտիչ Էմինն: Բայց Ռ. Պատկանեանը դժբախտաբար չկարողացաւ լիովին աւարտել այստեղ իւր ուսման ընթացքը՝ ստիպուած լինելով իբրև եկեղեցական սան—վերջին դասարաններից թողնել Լազարեան ձեմարանը իւր հօր թշնամիների որոգայթների պատճառով և հեռանալ Թիֆլիս իւր հօր մօտ (1849—1850 թ.թ.): Այստեղ երիտասարդ Ռափայէլը մի ժամանակ պարապում է դասաւորութեամբ Ներսիսեան դպրանոցում՝ իւր հօր առաջնորդութեամբ, որ տեսուչ էր դպրանոցի, և մասնակցում 1850 թ. հիմնած նորա «Արարատ» շաբաթաթերթում, հրատարակելով իւր առաջին բանաստեղծական փորձերը, որոնցից մի քանիսը մինչև այսօր ևս չեն կորցրել իրենց արժէ-

քը՝ մանաւանդ իրենց պարզ և սահուն աշխարհաբարով, որ մի նոր երևոյթ էր այն ժամանակ: Նորա երախայրիքն էր «Թռչնակ»—ռուս բանաստեղծ Բատիւշկովի «Птичка»—ոտանաւորի դրաբար փոխադրութիւնը՝ ըստորագրուած Ռ... Պ... սկզբնատառերով, որ լոյս տեսաւ «Արարատի № 4, Ա. տարի, 23 սեպտ. 1850 թ.: Այս՝ Ռ. Պատկանեանի առաջին և վերջին բանաստեղծութիւնն էր դրոց լեզուով. այնուհետև բոլոր նորա գրուածները՝ նոյն իսկ «Արարատի» մէջ հրատարակուածները՝ թուով հինգ*) աշխարհիկ լեզուով են: Դոցանից երեքը ընթերցողը կը գտնի ներկայ հրատարակութեան մէջ:

Հաւանական է կարծել, որ 1851 թ. մայիսին, երբ որ Ցէր-Գաբրիէլը՝ միայն 8 ամիս հրատարակելուց յետոյ դադարեցնելով իւր շաբաթաթերթը, վերադարձաւ Ն. Նախիջևան,—մեր բանաստեղծն ևս իւր հօր հետ էր: Բայց արդէն կարճ միջոցից տեսնում ենք նորան Դորպատ (1851—1852) իւր հօրեղբօրորդի Քերոբէ Պատկանեանի հետ, որ այդ ժամանակ յաճախում էր տեղային համալսարանը: Թէ ի՞նչ առարկաներ էր ընտրել մեր բանաստեղծը իւր պարապմունքների համար Դորպատում՝ դոնէ մեզ որոշ կերպով յայտնի չէ. ապահովապէս կարող ենք սակայն ենթադրել, որ համալսարանական կեանքը, ուսանողական շրջանը և գերմանական լեզուի ու գրականութեան ուսումնասիրութիւնը, որով նա զբաղուած էր—չէին կարող առանց բարերար հետևանքի ճնշել երիտասարդ Ռափայէլի վրայ: Նորա բանաստեղծական գրուածներից միայն

*) Ի գերեզմանի Լևոն վերջին Թագաւորի, Մահ Զարմայր նահապետի, Համակերպութիւն Ցորայ, Շինականի առաւօտեան երգ, Շինականի երեկոյեան երգ:



երկուսը և այն՝ փոխադրութիւններ, վերաբերվում են այդ միջոցին—«Սիրոյ երգը» և «Հայոց գինին»:

Բայց գերմանական ուսանողի անհոգ և ուրախ կեանքը երկարատև չէր. հազիւ մի տարի անցած՝ Ռափայէլ Պատկանեանը (ինչպէս երևում է՝ նորա հետ և Քերոբէ Պ.) նիւթական միջոցների պակասութենից՝ թողնում է Դորպատ (1852 թ. վերջերը), հաստատուելով առ ժամանակ Մոսկուա՝ համալսարանի պատմական-լեզուագիտական դասախօսութիւնները յաճախելու դիտաւորութեամբ:

1852 թ. մեր բանաստեղծի Մոսկուա գնալուն ապացոյց է՝ իւր պատանեկան մի պատկերի տակ յետոյ դրած ստորագրութիւնը՝ հանդերձ որոշ թուականով, այն—որ տեղատրուած է մեր հրատարակութեան Ա. հատորի սկզբում: Յաջորդ՝ 1853 թ. ևս Ռափայէլ Պատկանեանը Մոսկուա էր. այդ ժամանակին է վերաբերվում նորա մի փոխադրութիւնը «Ո՞ւաՆՈՂ»—«Երբ որ հողից մարդ դարձայ...»: Մի տարուց յետոյ՝ այն է 1854 թ., կազմվում է Մոսկուայի հայ ուսանողների մի մտերիմ շրջանում նորագիւտ գրականական ընկերութիւն, որի նպատակն էր ինքնուրոյն և թարգմանական գրուածներով ժողովրդականութիւն տալ նորածիլ, նորաբողբոջ աշխարհիկ գրականական լեզուին: Ընկերութեան երեք հիմնադիր անդամների անուան և ազգանուան սկզբնատառերից կազմվում է մի ընդհանուր գրականական կեղծանուն ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ, որի տակ ծածկուած էին Գ. Ֆ., Մն. Թ. և ինքը բանաստեղծը Ռ. Պ: Բայի բանաստեղծական մասից՝ որի ներկայացուցիչն էր Ռափ. Պատկանեան, «Գամառ-Քաթիպա» հրատարակութիւնը պէտք է պարունակէր նաև արձակ

գրուածները՝ պատմական, աշխարհագրական, բարոյական և այլն։ Այս մի դեղեցիկ և բարեդէպ ասպարէզ էր մանաւանդ Ռափայէլ Պատկանեանի համար՝ իւր ձոխ բանաստեղծական ձիրքերին նոր ընթացք և զարգացումն տալու, որ արդէն ընկերութեան հիմնադրութեան տարում գրեց իւր ամենաընտիր լերիկական բանաստեղծութիւնները՝ նուիրելով դոցա իւր մտերիմ ընկերներին։

1855 թ. սկզբին մեր բանաստեղծը՝ Մոսկուայում երկու տարուց աւելի ապրելուց յետոյ, տեղափոխվում է Պետերբուրգ՝ Զինուորական-բժշկական Ակադեմիան մտնելու նպատակով, որ և իրագործում է. բայց յետոյ՝ փոխելով իւր դիտաւորութիւնը, ընտրում է վերջապէս Համալսարանի Արևելեան բաժինը՝ իբրև իւր ձգտումներին աւելի համապատասխանող, ուր և աւարտում է իւր բարձրագոյն ուսումը՝ ըստ երևութին, 1860 թ.։ Բայց Ռափ. Պատկանեանը այդ միջոցին ևս՝ որպէս և միշտ, աւելի եռանդով ղբաղուած էր իւր գրականական պարապմունքներով. դեռ նոր Պետերբուրգ եկած՝ 1855 թ. նա ձեռք զարկեց նորակազմ ընկերութեան գրուածները հրատարակելու։ Նոյն թուի մայիսին լոյս տեսաւ «Գամառ-Քաթիպա» խորագրի տակ մի տետրակ (16 երես) բաղկացած 4 բանաստեղծութենից, 5 արձակ գրուածից և Ցառաջաբանից՝ գրքոյկի ձակատին՝ իբրև նշանաբան, կրելով Կարամզինի նշանաւոր խօսքերը—«գրէ՛ այնպէս, ինչպէս որ խօսում են և խօսէ՛ այնպէս, ինչպէս որ գրում են»։—Բանաստեղծութիւնները բոլորն ևս («Երկու քոյր», «Աղէն տանն է», «Օրօրոցի երգ գիւղական պրի կնոջ»)—Ռափայէլ Պատկանեանի գրչին էին պատկանում. իսկ արձակները՝ երևի թէ ընկերութեան միւս անդամներին։ Հաղիւ մի փոքր անցած՝



լոյս տեսաւ (1856) «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատութիւնների» երկրորդ տետրակը (դարձեալ 16 երես), որի մէջ առանձին ուշադրութիւն էր գրաւում հռչակաւոր «Արաքսի Արտասունքը»*) իւր՝ մինչ այն չքնաղ գեղարուեստական ներդաշնակութեամբ, ճշմարիտ բանաստեղծութեամբ և ազգային խոր զգայմունքով։ Այնուհետև մեկը միւսի հետքից լոյս են տեսնում նոյն հրատարակութեան 3-րդ, 4-րդ և 5-րդ տետրակները (1856—1857 թուերի ընթացքում), որոնց մէջ՝ բացի «Գամառ-Քաթիպա» ընկերութեան անդամներից և մասնաւորապէս՝ Ռափ. Պատկանեանից—ինչպէս երևում է, աշխատակցել են եղել նաև մեր բանաստեղծի հայրը՝ Տէր-Գաբրիէլ (հեղինակ մի քանի պատմական և քննադատական գրուածների), Քերոբէ Պատկանեան (Թարգմանիչ Շիլլերի «Երկրի բաժանման» և մի քանի գերմանական և ռուս երգերի), Դոպոխեան («Ծիծեռնակը» առաջին անգամ այստեղ տպագրուեց), Սարհաթեան և ուրիշները։

Ընդ ամենը 18 բանաստեղծութիւն հրատարակեց Ռափ. Պատկանեան այս հինգ տետրակներում, որոնք բոլորեքեան տեղաւորուած են ներկայ հրատարակութեան 1855—1857 թթ. շարքում։ Եւ որովհետև «Գամառ-Քաթիպա» ընկերութեան անդամներից ամենաեռանդունը և բեղմնաւորը էր Ռ. Պատկանեան, ուստի՝ միւսների հեռանալովը ևս, շարունակեց նա մենակ գրել և տետրագրուել նոյն կեղծ անունով, և այսպէս առ միշտ պահեց իւր վերայ «Գամառ-Քաթիպա» կո-

*) «Արաքսի Արտասունքը» (որպէս և «Երկու քոյրը», «Անվնաս մարդը» և միւսները) գրուած էր Մոսկուա, 1854 թ. բայց մենք տեղաւորեցինք դորան 1856 թ., նկատի առնելով ժողովածուի տպագրութեան թուականը։

չումը, որ այնուհետև ամենամեծ ժողովրդականութիւն ստացաւ ազգի մէջ։

Փոքր ինչ երկար ենք մենք կանգ առնում Ռ. Պատկանեանի կանխագոյն երկերի վերայ, որովհետև դեռ պարզուած չէ նոցա նշանակութիւնը՝ ինչպէս հարկն է. մինչ դեռ նոքա արժանի են խորին ուշադրութեան։ Այդ գրուածները միանգամ ընդ միշտ որոշ ուղղութիւն տուին բանաստեղծին՝ դնելով իրենց յատուկ կնիքը նորա ապագայ գրականական գործունէութեան վերայ,— մի ուղղութիւն, որին հաւատարիմ մնայ նա մինչև իւր մահը. այդ գրուածներն են դարձեալ, որոնք գարապետ կազմեցին մեր գրականութեան պատմութեան մէջ իրենց առաջնակարգ կարևորութեամբ։

Մինչև «Գամառ-Քաթիպան» բանաստեղծութիւնը մեզանում սովորաբար լոկ չափաբերական ասել էր. նա առաջինը եղաւ, որ ցոյց տուեց՝ թէ բանաստեղծութիւնը ինչ որ արտաքին չէ. չափաբերականը կարող է և զուտ պրօզա լինել։ Ռ. Պատկանեանի հրաշալի տողերի գաղտնիքը ոչ թէ սահուն ու ոլորուն, չափած ու կոփած ոտանաւորների մէջն էր, այլ այն ճշմարիտ քանաստեղծական, որ միշտ ընդդիմում է նորա գրուածների ներքին պարունակութիւնը, և գրաւում, յափշտակում ընթերցողին։

Բացի բանաստեղծականից՝ «Գամառ-Քաթիպայի» մէջ էլ ևս մի նոր և զօրաւոր տարր էր մեր աշխարհաբարի զարգացման պատմութեան մէջ. դեռ ոչ ոք նորանից առաջ այնպէս հասկանալի, թեթև, ճկուն, վսեմ ու շնորհալից, այո՝ ուր պէտք է, նաև կորովի և կրակոտ լեզուով չէր երգել. դեռ ոչ ոք չգիտէր այնպիսի նուրբ ճաշակով ընտրել հին լեզուի հրաշակերտ բեկորները և գեղարուեստական ներդաշնակութեամբ միացնել նոցա կենդանի բարբառի հետ. նա մշակեց և կատարելագործեց մի լեզու, որ 35—40 տարուց յետոյ ևս ամենից օրինակելի է համարվում մեր գրականութեան մէջ։ Այսպէս՝ «Իմ երգը», «Երկու քոյր», «Արաքսի Արտասուքը», «Նկարիչ», «Երկու բանաստեղծ», «Քահանայ», «Բաժակ Փրկութեան», «Հայ աղջիկ», «Ատուածածնի պատկերը»,— մէկը միւսից հրաշալի են, մէկը միւսից գերազանց։

Բայի «Գամառ-Քաթիպայի» հինգ տեսարաններից, որոնք գրականական բնաւորութիւն ունէին, Ռափայէլ Պատկանեան նոյն միջոցին՝ այսինքն երբ որ դեռ ուսանող էր (1855—1860), մեծ եռանդով զբաղուած էր նաև մանկավարժական հրատարակութիւններով։ Հասկանալով ուսման և կրթութեան գործում մայրենի լեզուի ահագին կարևորութիւնը, բայց կարօտութիւն զգալով թէ՛ անհրաժեշտ ձեռնարկների և թէ՛ ընթերցանութեան պիտանի գրուածների՝ մանաւանդ մանուկ սերնդի համար,—նա սկսում է մենակ՝ առանց օրևէ օգնութեան, հետզհետէ հրատարակել—Նոր-Այբենարան (1856) գրոց լեզուի ուսումնասիրութեան համար. (մի ուրիշ Այբենարան աշխարհաբարի ուսումնասիրութեան համար՝ հնչական ոճով—1884.).—Ապագային Եփեսոսում (1856—1857 թթ.) 139 այլ և այլ ազգային երգեր և տաղեր՝ կիրթ ճաշակով ընտրուած, 33 գործածական երգերի երաժշտական խազերով՝ իւր նմանով մինչև այն ժամանակ չըտեսնուած հրատարակութիւն.—Ռօքինզոն կրկ-ղոյն զուարճալի պատմութիւնը (1857) և Եղուարդոյ Ա-ռաքնեըը (1859)՝ երկուսն ևս պատկերազարդ, և վերջապէս Մեծին Պետրոսի պատմո-ւի-նը

(1863)—բոլորն ևս պարզ, դիւրաւտար աշխարհաբարով գրուած և ընթերցանութեան համար շատ հետաքրքրական նաև այժմ:

1860 թ. աւարտում է մեր բանաստեղծը իւր ուսման ընթացքը Համալսարանում և ճնում է առ ժամանակ Պետերբուրգ՝ իւր գրականական և հրատարակչական ասպարէզը չլքելու դիտամբ. նոյն նպատակով նա ձեռք է բերում և մի տպարան հայ և օտար լեզուների տառերով, ուր նա այնուհետև տպագրում էր իւր և ուրիշների գրուածները:

Այդ իսկ ժամանակ սկսաւ Թիֆլիսում հրատարակուել «Կռունկ հայոց աշխարհի» ամսաթերթը Մարկոս Աղաբէկեանի խմբագրութեամբ (1860—1863 թթ): Դա առաջինն էր մեր պարբերական թերթերից, որ առանձին ուշադրութիւն դարձրեց ազգային կեանքի և ժողովրդական գրականութեան ուսումնասիրութեան վերայ. ազգային վէպը իւր արժանաւոր ներկայացուցիչը դառաւ այնտեղ յանձին Պերճ Պռոշեանցի, և ազգային բանաստեղծութիւնը — Դամառ-Քաթխպայի: «Կռունկի» մէջ 1861 և 1862 թթ. սա հրատարակեց տասնի չափ բանաստեղծութիւններ՝ դոցա թուում և «Վարդան Մամիկոնեան» վիպասանութիւնը, որոնք բոլորեքեան այժմ էս պարզ կարող են համարուել ամենանրնաիր ամսագրի, և մի քանի արձակ գրուածներ՝ աւելի թարգմանական, ինչպէս՝ «Թոմաս Բօցարիս» (1861), «Թրօվաթօրէ» (1861), «Խաչակրաց արշաւանքը» (1862) —Մ. Մինասեանի կեղծ անունով տառապրուած:

Գոհ չլինելով իւր աշխատակցութեամբ «Կռունկին» և սակայն ձգտելով հրատարակախօսութեան ասպարիզում էս փորձելու իւր ոյժերը,—Ռ. Պատկանեան ձեռք է զարկում իւր սեպհական օրգանը հիմնելու Պետերբուրգում:

1863 թ. սեպտեմբերի միջին լոյս տեսաւ «Հնչակ բաղմավէպ լրագրի» (շաբաթաթերթ) № 1 մեծ քառածալ դիրքով 8 երես: Թերթի ձևակտին ոչ տարին էր նշանակած, ոչ ամիսը և ոչ օրը, որ միայն գրաքննութեան ցուցումից կարելի էր իմանալ. թերթի վերջին երեսում՝ տառև, նշանակած էր «Հրատարակիչ Ռ. Պատկանեան», որ միևնոյն ժամանակ և տպարանատէրն էր:

Նոր թերթի ուղղութիւնը և հայեացքները ընթերցողների առաջ պարզելուն պիտի ծառայէր Ռ. Պատկանեանի ընդարձակ յօդուածը «Մի քանի խօսք լրագիր հրատարակելու մասին»: Բայց նորանից ջերմ աշխատակից էր «Հիւսիսին» նաև մեր բանաստեղծի հայր՝ Ներսէսի Տէր-Գաբրիէլը իւր չափաբերական և արձակ գրուածներով, որոնցից յիշելու է պատմական բանաստեղծութիւնը «Վարդան Մամիկոնեան», Լեհաստանի հայերի թշուառութիւնները և այլն: Աշխատակիցների թիւը՝ ինչպէս երևում է, մեծ չէր և խմբագրութեան բոլոր ծանրութիւնը ընկած էր հրատարակչի վրայն. այդ միջոցին՝ երկու տարուայ ընթացքում, նա մի բանաստեղծութիւն անդամ չկարողացաւ գրել իւր թերթի համար՝ բոլորովին զբաղուած լինելով թարգմանական արձակ գրուածներով, որոնք գերակշռում էին թերթի պարունակութիւնը: Ռ. Պատկանեանի թարգմանութիւններից յիշելու է «Ծովաշրջիկ Սինդբադի եօթն ճանապարհորդութիւնները», որ յետոյ առանձին գրքով էս լոյս տեսաւ, և «Ուրուականի վէպը»: Թարգմանողներից էր նաև օրիորդ Օլգա Ամիպի (յետոյ մեր բանաստեղծի ամուսինը), որ փոխադրում էր քաղուած-

ներ Բայրընից, Լանգլուայից և այլ եւրոպական հեղինակներից։ Ինքնուրոյն յօդուածներից նկատելու է՝ «Ց. Ալամդարեան», «Վէրք Հայաստանի» (անկատար), «Խոյեցիք», «Ասարեանայ Հայեր» և այլն։—Բայց ընդհակառակն Ռ. Պատկանեանի մեծամեծ ջանքերին և բանական նուիրական զոհաբերութեան՝ թերթը մեծ աջողութիւն չունեցաւ. նա դադարեց 1864 թ., չկարողանալով դոհութիւն տալ ժամանակի գրականական և հասարակական պահանջներին։

Նոյն թուին ամուսնանում է մեր բանաստեղծը օր. Օլգա Ամիդիի հետ, որ Պետերբուրգի համալսարանի Արաբական լեզուի ուսուցչապետ՝ Ամիդեի Յովհաննէս Մելիք-Զարմեանի (Ամիդի) դուստրն էր։ Այնուհետև երկար չէ ճնում նա Պետերբուրգ. նա վաճառում է իւր տպարանը և 1866-ին ուղևորվում Ն. Նախիջևան։

Այստեղ Ռ. Պատկանեանը բացեց 1867 թ. «օրիորդական պանսիօն», որ վարում էր իւր ամուսնու աջակցութեամբ. 1873 թ. նոյն պանսիօնը տեղափոխեց Ռոստով, ուր և ճնաց մինչև 1876 թ.։ Այդ միջոցին նա հրատարակեց ուսուցիչ Հայերէնի և Աշխարհագրութեան Ն. Նախիջ. և Բես. թեմական դպրանոցում, բայց նա երկար չըճնաց այստեղ. ինչ որ ժժդոհութիւնների պատճառով՝ թողեց ուսուցչութիւնը 1878 թ. և յաջորդ 1879-ին բացեց «Մանկական պարտէզ» մինչև 1880 թ., երբ որ իւր և մի քանի անձանց նախաձեռնութեամբ Ն. Նախիջևանի հարիւրամեակի յիշատակին հիմնուած «Արուեստական դպրոցին» տեսուչ նշանակուեց։ Այդ պաշտօնը վարեց նա իրեն յատուկ եռանդով շարունակ 12 տարի՝ մինչև իւր մահը, որ պատահեց 1892 թ։



Տեղափոխուելով հիւսիսային մայրաքաղաքից Ն. Նախիջևան՝ աւելի մօտ ժողովրդի կեանքին, Ռ. Պատկանեան իւր անընդհատ ուսուցչական զբաղմունքների միջոցին, որոնց մասին դեռ ուսանողական նստարանից էր մտածում և հոգ տանում,—մի քայլ անդամ չը շեղուեց իւր մի անդամ ընդ միշտ բռնած ուղղութենից. նա միայն ընդարձակեց իւր պարապմունքների սահմանները՝ մէջ առնելով նաև այն ժողովրդի կեանքն ու լեզուն, որի հետ նա ապրում էր։ Մեր բանաստեղծին վիճակուած էր՝ բացի աշխարհիկ լեզուին ամենաբարձր օրինակը հանդիսանալուց, անմահացնել իւր տաղանդաւոր գրչով նաև իւր մայրենի բարբառը՝ Ն. Նախիջևանցոց լեզուն։

Դեռ 1867 թ. նոր միայն իւր ծննդավայրը վերադարձած, ձեռնարկում է Ռ. Պատկանեան կազմել «Ժողովածոյք օտարազգի բառերի Ն. Նախիջևանցոց լեզուի մէջ մտած»—Հայերէն-ռուսերէն-ֆրանսերէն, որ լոյս տեսաւ Պետերբուրգ 1870 թ.։ Այնուհետև յիշատակի արժանի Քերթ. Պատկանեանի առաջարկութեամբ, որ 1868 թ. դեղեցիկ միտք յղացաւ հայ բարբառների ուսումնասիրութեան համար նէ–ՂԷ հրատարակել՝ հանդերձ քերականական անհրաժեշտ բացատրութիւններով,—Ռ. Պատկանեանը սկսում է առանձին սիրով պատկերներ և վէպիկներ գրել դասական բարբառով, որի նրբութիւնները այնպէս ծանօթ էին նորան, ինչպէս ոչ ոքին։ Մի ձաշակ Ն. Նախիջևանցոց լեզուի լոյս տեսաւ դեռ 1869 թ. Ք. Պատկանեանի «Изслѣдованіе объ арм. діалектахъ»—գրուածում. այնուհետև 1875 թ. նոյն գիտնականի հրատարակած «Ново-Нахичеванскій говоръ» հատորում՝

Աֆթանդիլեան *) և յետոյ մի քանի պարբերական թերթերում Մ–Լ–ի կեղծանուններով — մի շարք վերլուծական հետաքրքրական պատկերներ՝ ընտիր ոչ միայն գաւառական ընտանի դողարիկ լեզուով, այլ մանաւանդ դեղարուեստական տեսակէտից: Պատկերների պարզ, անպաճոյճ նկարագրութեան մէջ աչքի է զարկում հեղինակի զարմանալի դիտողականութիւնը և այն խորին հոգեբանական անալիզը մարդկային սրտի նուրբ շարժումներին, որով պարծենալ կարող է ամեն մի նշանաւոր եւրոպական վիպագիր:

Ո՛չ պակաս ընտիր են և գեղեցիկ նոյն բարբառով գրուած բանաստեղծութիւնները, որոնք լոյս տեսան «Ն. Նախիջևանցոյ Քնարում» 1879 թ. և այնուհետև պարբերական թերթերում այլ և այլ ժամանակ մինչև 1888 թ.: Այստեղ քանքարաւոր բանաստեղծը մեծ մասամբ մարակում է իւր համաքաղաքացիների բարոյական և հասարակական ախտերը և թերութիւնները. այս՝ շատ նուրբ, կծու երգիծական գրուածներ են, որոնց նմանը չկայ մեր գրականութեան մէջ. թէև գարձեալ դոքա էին, որոնց շնորհիւ բանաստեղծը իրեն բաղմաթիւ թշնամիներ վաստակեց:

Բայց Ռ. Պատկանեանի մեծութիւնը՝ իբրև ազգային

*) «Ախտամերկեան» և «Սիւլ իւկ» կեղծանուններից զատ՝ Ռ. Պատկանեանը իւր բազմաթիւ մանր ու խոշոր գրուածների և թղթակցութիւնների տակ ստորագրում էր. «Խամչի», «Նշտարակ», «Պիզ», «Տամղա», «Ճանկով Մամուկ», «Ռւստուբա», (սոքա—«Մեղու Հայաստանի» լրագրում 1877—1880 թ.թ.) «Խըճճի աղայ» («Կայիափա» գրուածում), «Աշուղ Կարապետ», («Գամառ-Քաթիպա» հրատարակութեան Ա. տետրակում 1855).—«Մ. Մինասիբեան» («Կռունկի» մէջ): Բացի այլ և այլ ժամանակ հրատարակուածներից՝ Ռափ. Պատկանեանը թողել է նոյն արժանաւորութիւններով բազմաթիւ ձեռագիր վէպիկներ Ն. Նախիջևանցոյ կեանքից, որոնց արժէր լոյս ընծայել առանձին հատորով:



բանաստեղծի, երևում է մանաւանդ այն բանի մէջ, որ 42 տարուայ անխոնջ և անընդհատ դրականական գործունէութեան միջոցին—բոլոր իւր գրուածներում՝ չափաբերական թէ արձակ, դրականական, թէ գաւառական լեզուով—նա միշտ արձագանգ է եղած ազգային կեանքի մտաւոր և բարոյական երևոյթներին և կենսական բարձր շահերին ու պահանջներին: Ամենը՝ ինչ որ մտածել ու զգացել են, ինչով որ ապրել ու տանջուել են իւր ժամանակակիցները—կենդանի կերպով և գեղարուեստօրէն պատկերացրած է նորա երկերի մէջ:

1877—1878 թթ. խոր կերպով ազդեցրել են Հայերի կեանքում: Ռուս-Տաճկական պատերազմը և դրա հետ միասրած փայլուն յոյսերը՝ Տաճկահայերի թշուառ վիճակը բարուոքելու—վառեցին մեր բանաստեղծի սիրտը: Իւր կրակոտ խօսքով անվեհեր պաշտպան կանգնեց նա անդօր Տաճկահայերի մարդկային իրաւունքներին. մորակեց Տաճկին, պարսաւեց ապահով, փափկակեաց ազդայիններին, յանդիմանեց Տաճկահայի պախարակելի երկչոտութիւնը, քաջալերեց նորան դէպի ինքնապաշտպանութիւն, միջամտեց Եւրոպային՝ ողբելով նորան, բողոքելով նորա անտարբերութեան դէմ *): —Ազգային կեանքի այս դարագլուխը—նոր սահմանագլուխ եղաւ և մեր բանաստեղծի գրուածներին, որի

*) Այս պատուական բանաստեղծութիւնները, որոնք հետզհետէ լոյս էին տեսնում «Փորձ» ամսագրում (1877—80) և առանձին տետրակով հրատարակուելով («Ազատ երգեր») — հազարաւոր օրինակներով տարածուեցին ժողովրդի մէջ.—«Գամառ-Քաթիպայի» նախկին գրուածների հետ միասին լոյս ընծայեց Թիֆլիսի «Հրատարակչական Ընկերութիւնը» 1881 թ. Մոսկուայում՝ այս տողերս գրողի անմիջական հսկողութեամբ, որին ներկայիս երկրորդ անգամ բաղդ է վիճակվում խմբագրել մեծ բանաստեղծի երկասիրութիւնները:

քնարը այնուհետև մինչև իւր կեանքի վերջին օրերը նուիրուած է ազգային ամենամեծ վշաին՝ Տաճկահայերի դատին. «Գամառ-Քաթիպան»—այդ մարմնաւորեալ ազգային ինքնաճանաչողութիւնը, դարձաւ դարաւոր ձրնշման և հալածման կենդանի բողոք, որ արծարծուեց աշխարհի մի ծայրից միւս ծայրը և «շատ սրտերից արիւն քամեց»:

Ահա այս է Ռ. Պատկանեանի ամենամեծ վաստակը, որի համար նա արժանապէս ժառանգեց «ազգային բանաստեղծ» կոչումը:

Ռ. Պատկանեանի գրականական գործունէութեան ամիսուի նկարագիրը լրացնելու համար՝ յիշելու է նաև նորա գրականական լեզուով գրած ընտիր վէպերը, որոնք սկսում են լոյս տեսնել 1880 թուից՝ «Մխայէլ Վայէլեան» և «Սէ–լէ–ւ» կեղծանուններով: Դոցանից՝ «Ես նշանած էի» և «Փառասէր» («Փորձ»—1880)—հայ ուսանողական կեանքի երկու տարբեր բնաւորութեան նկարագիրներ են՝ հեղինակից ճիշտ դիտած և գեղարուեստօրէն վերաստեղծած, «Տիկին և Նաժիշտ», («Արձագանք» 1884)—Ռուս մայրաքաղաքներում ապրող հայ վաճառական ընտանիքի մոլար բարքերի պատկեր: Բայլ վէպերից՝ յիշելու է նորա մանր գրուածները («Մշակ,» 1878—79, «Մեղու», 1879, 1883) «Նոր-Դար 1884», «Արաքս» և այլ թերթերում), որոնցից նշանակելու է մանաւանդ «Աղբիւր» («Մեղու» 1883), «Լեղու կտրող» («Արաքս» 1890) և «Նոդեվար հայը»—որ հեղինակի վերջին արձակ գործն է և մի տեսակ մարդարէութիւն իւր կեանքի վերջին ժամերի մասին:

Թողնում ենք յիշել այստեղ ներկայ հրատարակութեան չվերաբերուող՝ թէև շատ կողմից հետաքրքրական, Ռ. Պատկանեանի բազմաթիւ ուղևորութեան տպաւորութիւնները, թղթակցութիւնները, նոյնպէս և պատմական և թատերական գրուածները (լոյս տեսած «Մշակ», «Մեղու», «Փորձ», «Արձագանք», «Նոր-Դար», «Վարժարան» թերթերում), որոնք մի երկու ստուար հատորի նիւթ կարող են ընծայել:

Մեր նպատակից դուրս էր՝ ի հարկէ, առաջարկել այստեղ մեծ բանաստեղծի լիակատար կենսագրութիւնը որպէս և նորա երկերի մանրամասն քննադատութիւնը. այդ երկուսն էլ՝ բազմակողմանի, լուրջ և առաջաւ հետազօտութեան համար դեռ բաւական ժամանակի են կարօտ: Իսկ եթէ մի-երկու տեղ մեր հանդուցեալ նպատակն էր՝ մինչև այսօր մեր գրականութեան մէջ դեռ չըշօշափած՝ բանաստեղծի գործունէութեան մի քանի կէտերը մեր կարողութեան չափ լուսաւորել:

---

Ռափ. Պատկանեան վախճանուեց Թոքատից՝ որ երկար ժամանակ տանջում էր նորան, 22-ին օգոստոսի 1892 թ. իւր ծննդավայրը Ն. Նախիջևան՝ 62 տարեկան հասակում: Այդ թուից—42 տարի նա անդադար՝ մինչև իւր կեանքի վերջին շունչը, կորովի գրիչը երբէք վայր չդնեց, կրթելով ամբողջ ազգը.—25 տարի անընդհատ նուիրեց հայ մանուկների դաստիարակութեան՝ բառիս բուն նշանակութեամբ հանդիսանալով «հայ վարժապետ—հայ ժողովրդի պաշտօնեայ ումպետ»: Նորա անունն մի ձեռնարկութիւնը, նորա բոլոր գործունէութիւնը նուիրուած է եղել ազգին: Նա էր և մնաց ան-

շահասէր՝ թէև միշտ նիւթական կարօտ վիճակուած, բայց և միշտ անտրտունջ և միշտ գոհ իւր վիճակից: Նա մեռաւ՝ «որք թողնելով 9 զաւակներ և անմխիթար՝ 4 միլլիօն հայ եղբայրներ», սակայն—և ... մի անուն, որ երբէք չի մոռացուի, քանի կը հնչէ հայկեան բարբառը:

Գ.Ր. Խ.

# ՀԱՏՈՐ I

## ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

---

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՑԻ

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

# ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿ

## ՀԱՏՈՐ I

---

## ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ


Հրատարակչից . . . . . Գ
Խմբագրութեան կողմից . . . . . Ե
Ա. Պատկանեանի համառօտ կենսագրական նկարագիրը . ԺԳ
Առաջին հատորի նիւթերի ցանկը. . . . . ԼԱ
Ա. Պատկանեանի պատկերը 1852 թ. . . .
Ա. Պատկանեանի ինքնագիրը (autographe) . . .


### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### «ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

---


1850 թ. Օ. արմայր նահապետի մահը . . . էջ 1
1851 Հ. ինականի առաւօտեան երգ . . . . 7
— Հ. ինականի երեկոյեան երգ . . . . 9
1852 Սիրոյ երգ . . . . . 11
— Հայոց գինի . . . . . 13
1853 Ասանող.—Երբ որ հողից մարդ դարձայ . . 14
1854 Ընայնութեան վրայ . . . . . 16
— Վանգատ բաղդէն . . . . . 17
1855 Իմ երգը . . . . . 19
— Երկու քոյր (նմանութիւն) . . . . . 21
— Օրօրոցի երգ գիւղական այրի կնոջ . . . 23
— Ընդէն տաճն է (նմանութիւն) : . . . . 26
— Թիֆլիզի քէֆ . . . . . 28

1856 Ա.րաքսի արտասուքը . . . . . 30
— Նկարիչ . . . . . 35
— Վ.երջին գարուն . . . . . 37
— Ոստիկ (փոխադրութիւն). . . . . 39
— Երկու բանաստեղծ (նմանութիւն) . . . 40
— Վահանայ (նմանութիւն) . . . . . 43
— Խաժակ փրկութեան . . . . . 45
— Տապանագիր Մ. Բ. Մանկան . . . . . 47
— Հայ աղջիկ . . . . . 48
— Վէոռ-Օղլու (վիպասանութիւն) . . . . 50
— Ընձեաս մարդ (փոխադրութիւն) . . . . 57
— Հայ և հայութիւն . . . . . 60
— Օրօրոցի երգ.—Ռուն եղեր պալաս . . . 128
— Այրաքաղաքում կրթած հայ երիտասարդ . 63
1857 Այրաքաղաքում կրթած հայ աղջիկ . . . 65
— Ուսանողի կեանքը (երգ).—Ուսանող ասածդ . 67
— Խարի խրատ . . . . . 69
— Աստուածածնի պատկեր . . . . . 71
— Վ.արդը բացուել ա . . . . . 72
1858 Փափ և Շ.ահ-զադա . . . . . 74
1860 Օրօրք Հայաստանի . . . . . 75
1861 Ռունի պսակ . . . . . 79
— Վաչէ Վ.արդան Աւամիկոնեանի մահը . . . 82
1862 Իմ սոխակին . . . . . 105
— Օտար օրիորդ և հայ պատանի . . . . 107
— Ղասու մօր երգը . . . . . 111
— Դէմ-Այրուս (ազգային աւանդութիւն) . . . 113
— Այուրացիկ կին . . . . . 118
— Ոգուց . . . . . 120
— Աշակ . . . . . 121
— Վանգատ.—Չալածում է այլազգին . . . 124
— Թէ իմ ալեւոր հերքս սևնային (նմանութիւն) . 126





1864 Ա.բեղայ . . . . . 130
1872 Ղզիշէ. (հեղինակութիւնը) . . . . . 133
1874 Աիրոյ ղոհեր . . . . . 135
1876 Երգ.—Երբ տրտում ես, բարեկամ, . . . 138
1877 Վ.անեցոց աղօթքը. . . . . 139
— Վ.անեցոց հայր-մերը . . . . . 141
— Այշեցու հեկեկանքը . . . . . 142
— Վ.անեցի մօր երգը . . . . . 144
— Վ.անեցի կարիճ. . . . . 145
— Վ.անեցի գեղջուկի տաղը . . . . . 146
— Խոզըք առ Ղուրթա . . . . . 147
— Զայն բարբառոյ յանապատի. . . . . 149
— Հայի գանգատը.—Մեզի մոռցաւ Հայոց աղգը . 151
— Պ.արիւր Մշեցի. . . . . 152
— Հալաբէն մէկը . . . . . 154
— Ընվերջ գանգատներ.—Մեր խեղճ ազգը . . 157
1878 Հայերուս թուքը . . . . . 159
— Այց Հայաստանի . . . . . 161
1879 Վ.երհաժողով. . . . . 162
— Նոր-տարի . . . . . 163
— Հայերուս բաղձանքը . . . . . 164
— Հրաշք (պատմական աւանդութիւն) . . . 165
— Հայի վիշտը . . . . . 167
— Այշեցու նոր սերունդ . . . . . 169
— Վ.անեցոց չունուագը . . . . . 170
— Հաւատ, յոյս, սէր. . . . . 171
— Ի՞նչ է մեզ պակաս . . . . . 174
— Հայի արիւն . . . . . 176
— Օ.ատիկ . . . . . 178
— Ղզգասէր . . . . . 179
1880 Երկու պատկեր . . . . . 181
— Ծերուկ վ.անեցի . . . . . 183

| | | |
|---|---|---|
| | ...ար . . . . . | 194 |
| | . . . . . | 195 |
| | . . . . . | 198 |
| | . . . . . | 200 |
| | . . . . . | 201 |
| | . . . . . | 204 |
| | ...մ սոխակ . . . | 206 |
| | . . . . . | 207 |
| | ...սլասանեանի յոբելեանին) | 208 |
| | ...տապանագիրը . . | 210 |
| | . . . . . | 211 |
| | . . . . . | 231 |
| | . . . . . | 215 |
| | Գ...ևոնդ . . . . | 217 |
| | . . . . . | 218 |
| | . . . . . | 219 |
| | . . . . . | 220 |
| | . . . . . | 222 |
| | . . . . . | 226 |
| | . . . . . | 227 |
| | . . . . . | 228 |
| | . . . . . | 229 |
| | . . . . . | — |
| | . . . . . | 230 |
| | . . . . . | 232 |
| | . . . . . | 233 |
| | ...եր գրէ՛ . . . . | 234 |
| — | Որոշ վկայութիւն. . . . . | 243 |
| — | Ընութեան սթափումն. . . . . | 245 |
| 1888 | Թաֆֆիի դագաղի վրայ . . . . . | 248 |
| — | Մի կարծէք որ ես . . . . . | 249 |
| — | Գ. Սունդուկեանցին. . . . . | 250 |
| — | Տապանագիր Յ. Ս. Ա. . . . . | — |
| 1889 | Ընկատար ցանկութիւններ . . . . . | 251 |
| 1890 | Կարինի կոտորած . . . . . | 252 |
| — | Կարինի սոխակ . . . . . | 254 |
| — | Ուղերձ առ Սուլթան . . . . . | 256 |
| 1891 | Հայ գինուոր . . . . . | 257 |
| 1892 | Հայ գուգաղի չունուադը. . . . . | 259 |
| — | Կարապի երգս. . . . . | 261 |

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### «Նոր-Նախիջևանի Վէնար»

| | | |
|---|---|---|
| | Յառաջաբան . . . . . | 265 |
| 1879 | Ինձի չի սիրողներուն . . . . . | 267 |
| — | Ղէկ մարդ . . . . . | 270 |
| — | Խաղ ու քէֆ. . . . . | 273 |
| — | Հին ու նոր ատէթներ . . . . . | 274 |
| — | Թաղիր . . . . . | 276 |
| — | Ընաջաւոր մարդիկ. . . . . | 278 |
| — | Կուսմիչէլէք . . . . . | 280 |
| — | Տապանագիր . . . . . | — |
| — | Ասանող.— | |
| — | Մեծ . | |
| — | Միրայ . | |
| — | Յոյս. . | |
| 1881 | Մպամած | |
| — | Ո՞ւչ անէնք | |
| — | Օրօրոցի կ | |
| — | Աստղիկ և | |
| 1883 | Հայ վարժ | |
| 1884 | Յովսէփ Ի | |
| — | Մեր նոր | |
| — | Աստղիկներ | |
| 1885 | Հայ տղայո | |
| — | Մեսրովբ, | |
| — | Մկրտիչ Ի | |
| 1886 | Յնորք (Ill | |
| 1887 | Գուսան. | |
| — | Փեսաներ . | |
| — | Սոխակ և օ | |
| — | Մշակներ | |
| — | Գրչակներ | |
| — | Երկտող . | |
| — | Մենամար | |
| — | Մարգարի | |
| — | Սէր և գին | |
| — | Խարոյակէ | |
| — | Հանաստեղ | |

| | | |
|---|---|---|
| 1879 | Տըպըղ քավալէտ | 281 |
| — | Պիլպիլ ու խառղայ | — |
| — | Խելօք լէվէնտ | 282 |
| — | Ֆօսմաղ-Ալան | 283 |
| — | Ջառպազանի Տէրուղլեան | 284 |
| — | Տասը պատգամ | 286 |
| — | Ալպային սիւրէթը | 288 |
| — | Վէֆի սէղօնը | 290 |
| — | Վալուպ-պալ | 291 |
| — | Billet Doux. | 293 |
| — | Պարոն Ե-ին խելքը | 295 |
| — | Ջէնիաթ | 297 |
| — | Խըճմտանք | 300 |
| — | Վէամիլ մարդոց խոստովանքը | 301 |
| — | Ալէկ ու գէշ | 304 |
| — | Տէրտէր | 308 |
| — | Արայի մարդ | 310 |
| — | Հարիւրամեակը | 311 |
| — | Մեհանաջին ահեղ դատաստանին օրը | 314 |
| — | Մեր առէնվայ փալիթիքը | 315 |
| — | Վշերվայ խալխք | 317 |
| — | Կարիճին քէֆը | 318 |
| — | Ա՛եմէրտ | 320 |
| — | 200,000, | 322 |
| — | Ասված վերջը բարին անէ | 325 |
| — | Ջարմանալու պաներ | 327 |
| — | Միութիւն և սէր | 329 |
| 1880 | Ալա և ֆիչի | 330 |
| — | Նոր սոյ ազգասէր | 331 |
| — | Պիլպիլ և պուհու | 333 |
| 1881 | Կօլօվա | 334 |
| — | Վ՛բաներէս առխոթաքռամէ | 336 |





| | | |
|---|---|---|
| 1881 | Մեր կօլօվացուներուն միտքէն ի՛նչ կանցնի | 337 |
| 1883 | Հոս ու հոն | 339 |
| — | Ջնկինութիւն | 340 |
| — | Վտիտ ու պարապմունք | 342 |
| — | Ջէնկինէ աղօթքը | 345 |
| 1884 | Հայ ազգի սրտացաւները | 346 |
| 1885 | Լոպիայի լուս և խնձորի ծառ | 348 |
| 1888 | Խոստովանք | 349 |
| — | Կուպլեռնաթօռի հացը | 351 |
| — | Լէվէնտին կանկառը | 353 |
| — | Ասա աղայ | 355 |
| — | Նոր աղօթք | 358 |
| — | Հայլի | 360 |


---


Կարևորագոյն վրիպակները Առաջին Հատորի . ԼԹ.

# ԿԵՐԵՒՈՐԵԳՈՑՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ

## ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

| Տպուած է | | | | Կարդա՛ |
|---|---|---|---|---|
| Էջ 93, | տող | 6, | վերեւից. | ՙՇնացոդք | ՙՇնացորդք |
| 94 | ,, | 4, | ,, | պերեզան | դերեզման |
| ,, | ,, | 12 | ներքեւից. | հիմի էլ | հիմի էլ |
| 95 | ,, | 10 | ,, | դիմինք | դիմինք |
| 96 | ,, | 5 | վեր. | մարգիկ | մարդիկ |
| 133 | ,, | 8 | ներք. | կը մոռանաս | կը մոռանամ |
| 169 | ,, | 4 | ,, | Լոք | Լոկ |
| 232 | ,, | 6 | ,, | տըղամարդու | տղամարդու |
| 250 | ,, | 5 | վեր. | Լանալ | լանալ |
| 298 | ,, | 1 | ,, | տուն-տեղ | տուն-տեղ |
| 116 | ,, | 12 | ,, | Թ. | Թէ |
| 336 | ,, | 2 | ,, | առախթաքռաթ | առախթաքռաթ |

(Բացի սոցանից պատահում են և՛ս մ, ը, լ ղ—տառերի ճայրերը կտրատուած)։

Чехонинъ - Гравюра.

тельщикова въ Москвѣ

Чехонинъ - Гравюра.

# 1850

## ՁՈՐՄԱՑԻ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Ամպը եկաւ ծածկեց սարերն ու ձորերը,
Ձէր տեսնուիլ պատերազմի դաշտերը,
Մէգ մառախուղ կ՚իջներ Իպայ լեռներէն,
Գիշերային մութը պատեց դիերը։
Հիւսիսային հողմը փչեց սաստկագին,
Հազարամեայ կաղնին շարժեց դողացուց,
Ամպի միջէն փայլատակեց փայլակը,
Ակօսի պէս պատռեց խաւար երկինքը։
Դիակներու հրոնչիւնը չէր լսվեր,
Քամին հեռու կ՚տանէր սաստիկ փչելով,
Ամպի գոռալն կ՚դղդէր երկիրը,
Մրրիկ կայծակ խառնակված էր օդումը։
Հեռուանց կու գայր լաց ու սգոյ ձայները,
Տրոյացւոց և կամ Յունաց բանակին,





միւս անգամ քեզ հեծնել,
ա առաջվան պէս այլ նստել։
այլ չեմ կարող ոտ դնել,
սանձդ բռնել մեռաքսեայ.
քեզ հետ շրջիլ սար ու ձոր,
արօտ կանանչ դաշտերուն։
մենք պատերազմ ենք տեսած,
քեզ հետ ողջամբ դուրս եկած,
ամ ծառայել ես մտերիմ,
ս կատարեա իմ պաշտօնը։
, ա՛ռ իմ յետին ողջոյնը,
մ այդ աներկիւղ քո գլխէն,

Աւա՛ նըրան, իմ սիրական սիպտակ ձի,
Թէ քո մարդը փեսայի պէս պառկեցաւ,
Հարսանիքն էր Իզայ լերին հովտաց մէջ,

Բայց երբ տեսնես դու նորահարս սևորած,
Որ գրկի մէջ մէկ հատ տղայ ունենայ,
Որ աչքերէն թափում լինի արտասուք,
Ու դաշտի մէջ պտռում լինի դերեզման,
Ու իմ անունս յիշում լինի անդադար,
Ու երեխին ասում լինի մշտապէս,
Թէ դու որբ ես ու հայր չունիս յաշխարհի,
Այսուհետև քեզ չի ձանչնար Հայաստան.
Այսուհետև դու մի՛ տեսնիր Արմաւիր,
Այսուհետև մի՛ յիշիր դու այն օրը,
Որ քեզ իշխան ազգի կոչեց Հայաստան,—
Իմացիր որ նա իմ կինն է խղճալի։

Այլ չէ կարող հըրաման տալ իւր ղօրաց։
Աւա՛ Հայոց ձեր Նահապետ Զարմայրը,